

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն
«Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ

Ապրիլի 6, 2017 թ.
Երևան

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանն ըստ «2017թ. Զբոսաշրջության մրցունակության զեկուլյցի» զբոսաշրջության մրցունակությամբ 84-րդն է 136 երկրների շարքում

Ըստ Զբոսաշրջության մրցունակության համաթվի Հայաստանի դիրքը բարելավել է 5 տեղով 2015 թվականի հետ համեմատ: Արդեն յոթերորդ անգամ է, ինչ Հայաստանը ներգրավվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող Զբոսաշրջության մրցունակության զեկուլյցում: Զբոսաշրջության ոլորտում աշխարհի ամենամրցունակ երկրների ցանկն այս տարի նույնպես գլխավորում են Իսպանիան, Ֆրանսիան և Գերմանիան:

Զբոսաշրջության մրցունակության համաթիվ


Զբոսաշրջության մրցունակության համաթիվը, որը համակողմանիորեն գնահատում է երկրների մրցունակությունը զբոսաշրջության բնագավառում, բաղկացած է 4 ենթահամաթվերից, որոնք հաշվարկվում են 14 հենասյուների գնահատականների հիման վրա:

Զբոսաշրջության մրցունակության համաթիվ

Ենթահամաթիվ 1 Զբոսաշրջությանն աջակցող միջավայր	<ul style="list-style-type: none">• Գործարար միջավայր• Ապահովություն և անվտանգություն• Սանիտարահիգիենիկ պայմաններ և առողջապահություն• Մարդկային ռեսուրսներ և աշխատաշուկա• ՏՐՏ պատրաստվածություն
Ենթահամաթիվ 2 Զբոսաշրջության քաղաքականություն և աջակցող պայմաններ	<ul style="list-style-type: none">• Զբոսաշրջությանն առաջնայնություն տալը• Միջազգային բացություն• Գնային մրցունակությունը զբոսաշրջության բնագավառում• Շրջակա միջավայրի կայունություն
Ենթահամաթիվ 3 Զբոսաշրջության ենթակառուցվածքներ	<ul style="list-style-type: none">• Օդային տրանսպորտի ենթակառուցվածք• Վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածք• Սպասարկման ենթակառուցվածք
Ենթահամաթիվ 4 Զբոսաշրջության մշակութային և բնական ռեսուրսներ	<ul style="list-style-type: none">• Բնական ռեսուրսներ• Մշակութային ռեսուրսներ և գործարար ուղևորություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԵՆԹԱՀԱՄԱԹՎԵՐԻ


Ձբոսաշրջությանն աջակցող միջավայր



*Լշում՝ Գործարար միջավայր հենասյունը ներկայացնում է Նախկին Օրենքներ և կանոնակարգեր հենասյունը՝ ընդարձակված ցուցանիշների ցանկով:

Այս ենթահամաթվի առումով Հայաստանի դիրքերը բարելավել են: Հայաստանում վիճակը բավականին բարվոք է ապահովության և անվտանգության, սանիտարահիգիենիկ պայմանների և առողջապահության առումով: Գործարար միջավայրի, մարդկային ռեսուրսների և աշխատաշուկայի առումով ցուցանիշները ևս բարելավվում են արձանագրել: ՏՀՏ պատրաստվածության հենասյունը ունի հարաբերականորեն ցածր ցուցանիշ: Հայաստանի դիրքի վրա բացասաբար են ազդել որակյալ աշխատուժ գտնելու դյուրին լինելը(123-րդ տեղ), անձնակազմի վերապատրաստման ցածր աստիճանը (107-րդ տեղ), գործարար միջավայրում ՏՀՏ-ների օգտագործումը (83-րդ տեղ): Չգալիորեն բարելավվում են արձանագրել հարկերի ազդեցությունը ներդրումների վրա (104-րդից 46-րդ տեղ), տարրական դպրոցներում ներգրավվածության աստիճանը (119-րդից 59-րդ տեղ):

Ձբոսաշրջության քաղաքականություն և աջակցող պայմաններ




Ձբոսաշրջության քաղաքականության և աջակցող պայմանների ենթահամաթվի առումով Հայաստանի դիրքը որոշակի բարելավվում է գրանցել Ձբոսաշրջության առաջնայնություն տալու և Գնային մրցունակության հենասյուններով: Առաջնթացն արդյունք է կառավարության կողմից զբոսաշրջության առաջնայնություն տալու (80-րդից 52-րդ տեղ) և կառավարության ծախսերը տուրիզմի ոլորտում (60-րդից 56-րդ տեղ) ցուցանիշների գծով դրական տեղաշարժերի: Ձբոսաշրջիկների ներգրավմանն ուղղված մարքեթինգի

արդյունավետությունն հենասյունով Հայաստանը 95-րդ տեղում է զգալիորեն բարելավելով դիրքը 2015թ-ի համեմատ (117-րդ տեղ):

Հայաստանի դիրքի վրա բացասաբար են ազդել շրջակա միջավայրի օրենսդրության խստության և կիրառման ցածր մակարդակը (համապատասխանաբար 97 և 110-րդ տեղեր), թեպետն այս ցուցանիշները գրանցել են որոշակի բարելավում 2015թ.-ի ցուցանիշների համեմատ: Բացասաբար են ազդել նաև զբոսաշրջության զարգացման բնապահպանական տեսանկյունից կայունությունը (98-րդ տեղ), ավիատոմսերի հարկերը և օդանավակայանի վճարները (111-րդ տեղ), մուտքի արտոնագրերի պահանջները (37-րդից 54-րդ տեղ), գնողունակության համարժեքության ցուցանիշը (41-րդից 57-րդ տեղ) և վառելիքի գների մակարդակը (48-րդ-ից 65-րդ տեղ):


2բոսաշրջության ենթակառուցվածքներ



Այս ենթահամաթիվը տրոհվել է նախկին զբոսաշրջության բիզնես միջավայր և ենթակառուցվածք համաթվից: Օդային տրանսպորտի ենթակառուցվածքն արձանագրել է բարելավում 4 տեղով (92-րդից 88-րդ տեղ): Դրական աճ է գրանցել օդանավակայանի ենթակառուցվածքի որակով (72-րդից 67-րդ տեղը): Այս ենթահամաթվի վրա բացասական ազդեցություն է ունեցել օդանավակայանից մեկնածների քանակը 1,000 բնակչի հաշվով ցուցանիշը (116-րդ տեղ):

Հայաստանը հետ է մնում նաև վերգետնյա տրանսպորտի ենթակառուցների՝ ճանապարհների, երկաթուղիների, մոտակա նավահանգիստների որակով (համապատասխանաբար 80-րդ, 62-րդ և 120-րդ տեղեր)՝ չնայած արձանագրված որոշակի բարելավման:

2բոսաշրջության մշակութային և բնական ռեսուրսներ



Բնական ռեսուրսների հենասյունով Հայաստանը բարձրացել է 136-ից 89-րդ տեղը: Եկթահենասյուններից դրական աճ են գրանցել ընդհանուր պաշտպանված տարածքները (96-րդից 37-րդ տեղ): Ըստ բնական ռեսուրսների գրավչություն Հայաստանը 74-րդ տեղում է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ՝ ԱՊՅ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱՆՑ

Չբոսաշրջության մրցունակության համաթիվ

Երկիրը	Համաթվի արժեքը	Չբաղեցրած դիրքը (136 երկրների շարքում)	Դիրքի փոփոխությունը 2015-2017 թթ.
ՌԴ	4.15	43	+2
Վրաստան	3.70	70	+1
Ադրբեջան	3.70	71	+13
Ղազախստան	3.59	81	+4
Հայաստան	3.53	84	+5
Տաջիկստան	3.18	107	+12
Ղրղզստան	3.10	115	+1
Մոլդովա	3.09	117	-6

Վերոնշյալ երկրների խմբում զբոսաշրջության բնագավառում ամենամրցունակ երկիրը շարունակում է մնալ Ռուսաստանը (43-րդ տեղ)՝ բարելավելով իր դիրքերը 2015թ. նկատմամբ 2 տեղով:

ԱՍՓՈՓՈՒՄ

Համաձայն գեկույցի զբոսաշրջության ոլորտը դինամիկ զարգանում է ամբողջ աշխարհում: Կանխատեսվում է, որ մինչև 2030թ. զբոսաշրջիկների թիվն աշխարհում կաճի 50%-ով 2016թ.-ի նկատմամբ, հասնելով 1.8 միլիարդի: Չարգացող երկրներում, ոլորտի աճը տեղի է ունենում ավելի արագ տեմպերով, որը կհանգեցնի զբոսաշրջության ոլորտում էական, կառուցվածքային փոփոխությունների:

Հիմնական զարգացման միտումները հետևյալներն են՝

- Աճում է զբոսաշրջիկների քանակը աֆրիկյան երկրներից, Մերձավոր Արևելքից, ասիական երկրներից, և այս միտումը կպահպանվի մոտակա 10 տարիների ընթացքում:
- Մեծ քանակությամբ երկրներ հակված են վիզայի ռեժիմի ազատականացմանը, և երկրների քանակը նմանատիպ նախաձեռնությամբ տարեցտարի աճում է: Մոտ 20%-ով աճել է այն մարդկանց քանակը աշխարհում, որոնք կարող են ճանապարհորդել առանց վիզայի (58%) 2008թ.-ի համեմատ:
- ՏՀՏ ոլորտի զարգացումները, երկրում հեռախոսային, ինտերնետային ծածկույթների ապահովվածությունը դառնում են անհրաժեշտ պայմաններ զբոսաշրջության ոլորտի զարգացման համար: Մեկ տարվա ընթացքում, առցանց ամրագրումների քանակը աճել է 230%-ով 2016 թ-ին հասնելով 33%-ի:

- Շրջակա միջավայրի, ճանապարհատրանսպորտային ենթակառուցյունների, բնական ռեսուրսների ընդհանուր պահպանումը և զարգացումը ուղիղ համեմատական են զբոսաշրջության ոլորտից ստացված եկամուտների հետ: Մարդիկ հակված են ավելի շատ գումար ծախսել և ճանապարհորդել ավելի բարեկարգ երկրներ: Չարգացնելով և պահպանելով շրջակա միջավայրը, երկրները զարգացնում են նաև երկրի բրենդը՝ որպես զբոսաշրջային կենտրոն, և նպաստում ոլորտի աճին:

Հայաստանում զբոսաշրջիկների քանակի շարունակական աճ է գրանցվում՝ արձանագրելով 5.7% աճ 2016թ.-ին: 2016թ.-ին միջազգային զբոսաշրջությունից ստացված եկամուտները կազմել են 967 մլն դոլար կամ երկրի ՀՆԱ-ի մոտ 10%-ը: Այն 2010 թվականի համեմատ աճել է մոտ 2,5 անգամ:

Միջազգային զբոսաշրջության զարգացման վրա զգալի ազդեցություն է թողնելու Հայաստանի շուկա նոր՝ հատկապես բյուջետային ավիափոխադրողների մուտքը, ինչպես նաև ռուսաստանցիների համար ներքին անձնագրերով մուտքի թույլտվությունը:

Այնուամենայնիվ՝ երկրում առկա են խնդիրներ, որոնք էական ազդեցություն են ունենում Հայաստանի զբոսաշրջային մրցունակության վրա՝

- Շրջակա միջավայրի, ճանապարհատրանսպորտային ենթակառուցյունների, բնական ռեսուրսների ընդհանուր վիճակի և պահպանման ցածր մակարդակը,
- Չբոսաշրջության ոլորտում անձնակազմի վերապատրաստման ցածր աստիճան և որակյալ աշխատուժի պակասը,
- Երևանից դուրս զբոսաշրջային ենթակառուցվածքի և հյուրանոցային տնտեսությունների բացակայությունը,
- Երկրի բրենդինգի, առաջնության և նոր պրոդուկտների զարգացման ցածր արդյունավետությունը:

Ինչպես նշում է «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հանրային խորհրդատվության ղեկավար Սևակ Հովհաննիսյանը «Չբոսաշրջությունն Հայաստանում եզակի ոլորտներից է, որի զարգացումը բազմակողմանի դրական ազդեցություն կունենա երկրի ընդհանուր զարգացման վրա. երկրում արտադրվող արտադրանքի և ծառայությունների սպառում («արտահանում» առանց լոգիստիկ բարդությունների), երկրի ճանաչելիության աճ, երկրի թույլ զարգացած հատվածներում եկամուտների ձևավորում և աշխատատեղերի ստեղծում: Ներկայիս աճի տեմպը բավարար չէ զարգացման առկա պոտենցիալի յուրացման և շոշափելի սոցիալ-տնտեսական արդյունք ստանալու համար: Թռիչքային զարգացումը կարող է ապահովվել միայն համալիր և համակարգված քաղաքականության, հստակ թիրախների, ռազմավարության և գործուն ծրագրի սահմանման և իրագործման միջոցով, որը հիմնված կլինի հասարակության բոլոր հատվածների միջև գործընկերության և ընդհանուր նպատակի համար ուժերի համախմբման վրա: Իսկ վերջիններիս իրագործման առանցքային նախապայմաններն են բավարար ռեսուրսների հատկացումը և կադրերի ապահովումը»:

Չբոսաշրջության մրցունակության զեկուլյցի մասին

Չբոսաշրջության համաշխարհային մրցունակության զեկուլյցն առաջին անգամ տպագրվել է 2007թ-ի մարտի 1-ին Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից (ՅՏՖ): ՅՏՖ-ը երկրների զբոսաշրջության մրցունակությունը գնահատելու նպատակով մշակել է Չբոսաշրջության մրցունակության համաթիվը: Այն բազմաչափ վերլուծություն է երկրի՝ որպես զբոսաշրջության կենտրոնի, համեմատական ուժեղ և թույլ կողմերը գնահատելու տեսանկյունից: Համաթվի հաշվարկման ժամանակ օգտագործվել են զբոսաշրջության ոլորտի

ամենահամապարփակ տվյալների հենքերը՝ ինչպես «կոշտ տվյալներ» (WTTC; UNWTO), այնպես էլ հարցումների միջոցով ստացված տվյալներ: Չեկույցի պատրաստման գործին աջակցում են գործընկեր կազմակերպությունները՝ Booz & Company, Deloitte, IATA, IUCN, UNWTO, WTTC, եւ գործընկեր ինստիտուտների (հետազոտական) համաշխարհային ցանցը: Հայաստանում ՀՏԲ-ի գործընկեր կազմակերպությունն է հանդիսանում «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնը:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

«Տնտեսություն և արժեքներ»-ը՝ «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը, մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում: «Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ավելի բարձր մակարդակի ձգտող կազմակերպություններին:

Հայաստան, ք. Երևան 0010,
Մելիք-Աղամյան 2/1
Հեռ.՝ +374 10 546 434
info@evconsulting.com
www.evconsulting.com, www.ev.am